

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԲԱՅՈՒՄ
ՓԱՍԱՏԻՆԱՅԻ ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱԼՈՐԻՉ ՀԱՅՑ. ԵԿԵՂԵՑԻՈՅ
ԿԵՐԱՆՈՐՈԳՈՒԹ ՎԻՐԱԿՈՍ ՍՐԱՀԻ

Այսու գնահատութեամբ կը յայտնենք թեմիս համայն հաւատացեալներուն, թէ Փասատինայի Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ Հայց. Եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւ՝ Արժ. Տ. Սարգիս Աւագ Քինյ. Փեթոյեանի, Ծխական Խորհուրդի, Շինութեան Յանձնախումբի, Տիկնանց Միութեան եւ Ծուխի յարակից կազմակերպութիւններու եւ հաւատացեալներու համատեղ ջանքերուն շնորհիւ եւ բարերարութեամբ Տէր եւ Տիկին Մարք Կիրակոսի, Եկեղեցւոյ վերանորոգուած սրահը վերակոչուեցաւ ԿԻՐԱԿՈՍ ՍՐԱՀ՝ ի պատիւ Մարք Կիրակոսի ծնողներուն՝ Տէր եւ Տիկին Փօլ եւ Պէթի ճէյն Կիրակոսի:

Սրահի պաշտօնական բացման մասնակցեցան Առաջնորդ Սրբազան Հայրը, Գերշ. Տ. Վաչէ Արք. Յովսէփեան, Հոգշ. Տ. Գեղամ Ծ. Վրդ. Ջաքարեան, Ծուխին Հոգեւոր Հովիւ՝ Արժ. Տ. Սարգիս Աւագ Քինյ. Փեթոյեան եւ Սարկաւազներ:

Եկեղեցւոյ Ծխական Խորհուրդի Ատենապետ՝ Վահէ Իսկէնտերեան բարի գալուստ մաղթեց բոլորին՝ նշելով թէ եկեղեցին իր հաւատացեալներով ուրախ է, որ վերանորոգուած սրահը կը վերակոչուի ԿԻՐԱԿՈՍ ՍՐԱՀ: Շնորհակալութիւն յայտնեց բարերարներուն:

Ճաշկերոյթի սեղաններուն օրհնութիւնը կատարեց Արժ. Տ. Սարգիս Աւագ Քինյ. Փեթոյեան: Օրուան հանդիսավարն էր Իրաւաբան Պրայըն Գապաթէք, որ որպէս իրաւաբան գործակիցն է Մարք Կիրակոսի: Գործադրուեցաւ հաճելի յայտագիր մը: Ընթրիքի ընթացքին Գերըն Պենճամին եւ Էլըն Չաքմէն ներկաները խանդավառեցին իրենց երգերով եւ նուագներով: Տէր եւ Տիկին Փօլ եւ Պէթի ճէյնի թռռնիկները Ռաչըլ, Միքի, Թէնի, ճէյք եւ Ռուպի Ալիս իրենց գեղեցիկ յուշերով հանդէս եկան եւ իրենց սէրը յայտնեցին մեծ հօր եւ մեծ մօր: Ապա խօսք առաւ Մարք Կիրակոս եւ իր ուրախութիւնը յայտնեց, թէ Աստուծոյ կամքով ի յարգանս իր ծնողներուն Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ Հայց. Եկեղեցւոյ Սրահը կը կոչուէր ԿԻՐԱԿՈՍ ՍՐԱՀ: Իր երախտագիտութիւնը եւ որդիական սէրը յայտնեց ծնողներուն, քաջառողջութեան եւ արեւշատութեան մաղթանքներ կատարեց: Ապա իր շնորհակալութիւնները յայտնեց Առաջնորդ Սրբազան հօր: Արժ. Տ. Սարգիս Աւագ Քինյ. Փեթոյեան եւ Ծխական Խորհուրդի Ատենապետ՝ Վահէ Իսկէնտերեան առ ի գնահատանք նուէր մը յաձնեցին Տէր եւ Տիկին Փօլ եւ Պէթի ճէյն Կիրակոսին: Ապա, Սրբազան Հայրը իր խօսքին մէջ ըսաւ, մէքբերելով Տասնաբանեայ Պատուիրաններէն *«Պատուէք ու հայրդ եւ մայրդ»* խրատը, շեշտելով ծնողները պատուելու ոգին, մօտեցումը եւ գնահատութիւնը անոնց կատարած երկար տարիներու հոգածութեան եւ ծառայութեան համար: Գնահատեց Մարք Կիրակոսին ունեցած անկեղծ եւ ջերմ սէրը հանդէպ իր ծնողներուն: Շնորհաւորեց Տէր եւ Տիկին Փօլ եւ Պէթի ճէյն Կիրակոսը եւ իր օրհնութիւնները բաշխեց անոնց: Յատուկ գնահատանքի արժանացուց Արժ. Տ. Սարգիս Աւագ Քինյ. Փեթոյեանը, Ծխական Խորհուրդը եւ բոլոր անոնց, որոնք անձնուէր ծառայութիւն պատուցած էին այս ձեռնարկի յաջողութեան համար: